«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«Հայդուկային շարժում» թեմայի ուսումնասիրության գործընթացի կազմակերպման և պլանավորման առանձնահատկություններն 8-րդ դասարանում
ԱՌԱՐԿԱ	Հայոց պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Ազգանուշ Երզնկյան
ՄԱՐԶ	Լոռի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ալավերդու Մ. Թանդիլյանի անվան թիվ 10 հիմն. դպրոց
ՂԵԿԱՎԱՐ	Գագիկ Էմինյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ——————————————————————————3
«Հայդուկային շարժումը» թեմայի ուսուցման կարևորությունը——————————6
Դաշտենցի «Ռանչպարների կանչը» «Հայդուկային պայքարը» թեման
ուսումնասիրելիս ——————————————————————————8
«Հայդուկային շարժումը» թեմայով դասի օրինակ ——————————————9
Եզրակացություն ----————————————————————————17
Օգտագործված գրականության ցանկ——————————————————————18

Ներածություն

Երբ մի ժողովուրդ իր նվիրական իդեալը
կապում է մի անձի ճակատագրին, ապա
պատմությունը դադարում է, և սկսում է
լեգենդների խորհրդավոր և ոսկե շարանը:

Ավետիս Ահարոնյան

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մեր դպրոցն ունենցել է անչափ կարևոր և բարդ առաքելություն՝ կրթել ապագա քաղաքացուն՝ հայրենասեր ու հայրենատեր, մարդասեր ու բարոյական բարձր արժեքներ ունեցող անհատին, ազգային արժեհամակարգը պահպանողին ու ստեղծողին:

Ֆրանսիացի փիլիսոփա Դենի Դիդրոն ասում էր. «Կրթությունը մարդուն տալիս է արժանապատվություն, և նույնիսկ ստրուկն է սկսում գիտակցել, որ ինքը ծնված չէ ստրկության համար»: Օրվա հրամայականն է հայ մարդու, առաջին հերթին սովորողի մեջ սերմանել արժանապատվության և ստրուկ չլինելու գաղափարը: Բայց ինչպե՞ս դա անել, երբ շատ հաճախ դասագիրքը սովորողի մոտ ասոցացվում է որպես ավելորդ ու անպետք, դժվար մարսվող բառերի ու տերմինների կույտ: Կարծես՝ դարերով սեփական պատմությունն ու լեզուն ինչպես հարկն է սովորելու հնարավորություն չունեցած ժողովուրդը փորձում է դարերի բացը լրացնել ամբողջն այս սերնդից պահանջելով:

Հետազոտության արդիականությունը. Վերջին տարիներին շատ ենք խոսում այն մասին, որ սովորողին դժվար է ներգրավել դասապրոցեսի մեջ, հետաքրքրություն առաջացնել առ դպրոցը և ուսուցանվող առարկաները: Սովորողի պատասխանն էլ միշտ կապված է դասագրքի բարդ ու անհասկանալի լինելու, հանձնարարությունների շատ լինելու, ուսուցչի անիրականանալի պահանջների հետ:

Այս ամենը հաշվի առնելով կարևոր է պատմության (և ոչ միայն) դասը հնարավորինս հասկանալի, արդիական ու հետաքրքիր դարձնելը: Հակառակ դեպքում սովորողը կձանձրանա պատմական հեռուների մասին պարբերաբար լսելուց և իր համար եզրահանգումներ չի կատարի: Կարևոր է սերմանել այն գաղափարը, որ «Պատմություն» առարկայի հիմքում պատմելը չի ընկած, այլ պատմական տարբեր

ժամանակահատվածներում տեղի ունեցած դեպքերն ուսումնասիրելն ու դրանց վերաբերյալ եզրահանգումներ կատարելը:

1. Պատմությունը միայն անցյալի մասին գիտելիք չէ:
2. Այն տարբեր ժողովուրդների փորձը, ու ձեռքբերումներն ուսումնասիրող գիտություն է:
3. Պատմության վերաբերյալ գիտելիք ձեռք բերելու ճանապարհին շատ կարևոր է ուսումնասիրել դեպքերի պատճառներն ու հետևանքները:

«Որպեսզի սովորողները պատմական մտածողություն ձևավորեն և ոչ թե միայն դրա որոշ հատվածներ յուրացնեն, պետք է խրախուսել նրանց ամբողջական պատմական մտածողություն կիրառել: Եթե իսկապես ուզում ենք սովորողների մտածողությունը զարգացնել, ապա պետք է ուսումնառության այնպիսի փորձառություններ ստեղծենք, որ նրանք մտածեն սեփական մտածողության մասին: Սովորողների պատմական մտածողությունը կզարգանա, եթե նրանց հանձնարարենք մտածել պատմության մասին՝ որպես իմացության ձևի: Կարևոր է, որ սովորողը մտածի այսպիսի հարցերի շուրջ.

- *Կարո՞ղ ենք անցյալից սովորել:*
- *Կարո՞ղ է պատմությունը մեզ ասել, թե ով ենք մենք:*
- *Ի՞նչ է ժամանակահատվածը, իրադարձությունը:*
- *Ինչո՞ւ են իրադարձությունները տեղի ունենում:*
- *Արդյո՞ք կարևոր է, թե ով է իրադարձությունները դիտարկողը:*
- *Արդյո՞ք պետք է անցյալի գործողությունների մասին դատել ըստ ժամանակից ստանդարտների»:* [2; 28-29]

Կարևոր է պատմության դասին ուսումնասիրած յուրաքանչյուր թեմա արդիականացնել և այն դիտարկել մեր օրերում տեղի ունեցող դեպքերի ու իրադարձությունների համատեքստում:

Հետազոտության նպատակը.

- 8-րդ դասարանի «Հայոց պատմություն» առարկայի «Հայդուկային շարժում» դասի կոնկրետ օրինակով ցույց տալ, թե ինչպես կարելի է պատմական բարդ տերմիններ և անուններ պարունակող դասը դարձնել հնարավորինս մատչելի, հետաքրքրություն առաջացնել 19-րդ դարի 2-րդ կեսի ազատագրական պայքարի կարկառուն ներկայացուցիչների հանդեպ:

Հետազոտության խնդիրները.

- Բացահայտել «Հայդուկային շարժում» թամայի ուսուցման արդյունավետ պայմանները:
- Ուսումնասիրել պատմական բարդ տերմիններ և անուններ պարունակող դասերի առանձնահատկությունները:
- Սովորողին հնարավորություն տալ ստեղծագործելու, սեփական մտքերն անկաշկանդ արտահայտելու:
- Ապահովել ներառականությունը:

«Հայդուկային շարժում» թեմայի ուսուցման կարևորությունը

Քո ցավն, Հայրենիք, կրակե շապիկ է.

հագնում եմ վառում է, հանում եմ մեռնում եմ...

Վարդգես Պետրոսյան

Հայդուկային շարժումը թեմայի շրջանակներում սովորողները ծանոթանում են 19-րդ դարի անհատական- պարտիզանական, վրեժխնդրական պայքարի կարկառուն ներկայացուցիչների հետ: Մարդկանց, ովքեր տեսնելով մեծ տերությունների անտարբեր վերաբերմունքն արևմտահայերի ծանր դրության հանդեպ, փորձեցին արդարությունն իրենց ձեռքը վերցնել ու պայքարել՝ տալով սեփական երդումն ու Հայաստանի ազատագրության խնդիրն իրենց պատվի հարցը դարձնելով:

Քանի որ մեր օրերում էլ ունենք անկախությունը պահելու խնդիր, շատ կարևոր է օգնել սովորողներին կազմել սեփական բազմատեսանկյուն վերլուծական պատկերացումը 19-րդ դարում Օսմանյան կայսրության կազմում ապրած հայերի ու նրանց ազատագրական պայքարի վերաբերյալ, կապեր գտնել հայ ժողովրդի՝ անցյալում և մեր օրերում ունեցած սխրանքների, կատարած սխալների վերաբերյալ:

Ըստ պետական չափորոշչային պահանջների 8-րդ դասարանի «Հայոց պատմություն» առարկայի «Հայդուկային շարժումը» դասի շրջանակներում սովորողը պետք է իմանա Հայաստանի ազատագրության և պետության վերականգնման նպատակով իրականացված ձեռնարկների, ակնառու գործիչների վերաբերյալ, գնահատի դրանց տեղն ու դերը Հայոց պատմության մեջ, ընբռնի և արժևորի տվյալ ժամանակաշրջանի և ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, զարգացնի վերլուծական, քննադատական, ստեղծագործական մտածողությունը: Ճանաչի ակնառու պատմական գործիչներին, համեմատի նրանց, գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները: [5; 51]

Չափորոշչային պահանջները շատ են, բայց դրանց կարելի է հասնել ուսուցչի և սովորողի ճիշտ համագործակցության արդյունքում:

«Կան հավերժական թեմաներ, որոնք ընդհանուր են բոլոր ժողովուրդների համար՝ կարոտ, սեր, բնություն, հայրենասիրություն... Սակայն, սրանցից բացի, յուրաքանչյուր

ժողովուրդ ունի իր հավերժական թեմաները: Իտալացին միշտ գրել և գրում է Գարիբալդիի մասին, ֆրանսիացին՝ Ժաննա դ՛Արկի և այլն: Մեզ՝ հայերիս համար այդպիսի հավերժական թեմա է Անդրանիկը: Անդրանիկը՝ ոչ միայն որպես անհատ, որպես հայդուկ, որպես զորավար, այլև որպես համազգային ընդվզումի, ազատագրական շարժումների խորհրդանիշ, որպես խտացում և հավաքական կերպար Արաբոյի, Աղբյուր Սերոբի, Գևորգ Չաուշի, Սպաղանաց Մակարի, Մուրադի, Սեպուհի և մյուս-մյուս «կրակե շապիկ» հագածների»: [1;10]

Մեկ դասաժամի ընթացքում ըստ ամենայնի անդրադառնալ վերը թվարկված բոլոր անուններին ու ներկայացնել յուրաքանչյուրի գործունեությունը շատ դժվար է: *«Ամենապաղանդավոր գրողը մի վեպով հազիվ թե սպառի մեն մի ֆիդայու կյանքը»* [3;46]:

Կրկնակի դժվար և ծանձրալի կլինի սովորողի համար, եթե դասի ընթացքում ուղղակի ավանդական մեթոդով դասահարցում իրականացվի, նրան մտածելու, վերլուծելու, եզրահանգումներ անելու հնարավորություն չտրվի: Արդյունքում երեխան կսկսի չլսել, այլ զբաղմունք գտնել, չկենտրոնացնել ուշադրությունը: Ուսուցչը ու սովորողը պետք է շփվեն դասի ժամանակ: Այսինքն՝ սովորողները լինեն ոչ թե պասիվ ունկնդիրների դերում, այլ՝ ակտիվ մասնակիցների: [4]

Այս ամենն ապահովող դասի մի օրինակ է առաջարկվում ստորև: Ներկայացված դասը լի է տարբեր մեթոդներով, ինչը մասնակցային է դարձնում այն: Այսինքն՝ տարբեր հմտություններ և ունակություններ ունեցող սովորողները կարող են ներգրավված լինել ուսումնական գործընթացում: Միևնույն ժամանակ հնարավոր է իրականացնել պետական առարկայական չափորոշչով նախատեսված կետերը:

Դաշտենցի «Ռանչպարների կանչը» «Հայդուկային շարժումը» թեման ուսումնասիրելիս

Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» հայ գրականության ամենահավաքական պատմավեպերից է, ամենաոգեղենը, ամենահերոսականներից մեկը: Այն հասարակ ռամիկի ծանր կյանքն ու դժվարությունները, ամենօրյա պայքարը ներկայացնող, բայց միևնույն ժամանակ գրական պաթոսից զերծ գործ է: Իզուր չէ, որ 19-րդ դարի 60-ականների սերնդի մասին պատմող այս վիպասքը նաև 20-րդ դարի 90-ականների Արցախյան պատերազմի շատ ու շատ զոհված զինվորների ուսապարկերից են գտել:

Անդրանիկը, Արաբոն, Մախլուտոն, Չավուշը, Սերոբը. ո՞վ էր նրանցից ամենագլխավոր հերոսն այս գրքում: Գուցե Ֆադեն կամ Կարո՞ն, Մելքոն վարժապետը կամ նրա աշակերտ Մամիկո՞նը: Ինձ թվում է, այն յուրաքանչյուր ռանչպարի մասին է, ով պայքարում էր հայրենի երկնքի տակ իր մի կուտ ցորենը կամ գարին մշակելու համար:

Արդյո՞ք հայ ռանչպարի կանչը փոխվել է, թե՞ այն դեռ վերը նշված ցորենը հայրենի երկնքի տակ մշակելու մասին է: Կամ ո՞վ է այդ կանչի հասցեատերը:

«Հայդուկային շարժումը» դասն ուսումնասիրելուց և այս վիպակին ծանոթանալուց հետո սովորողն ինքը կարող է պատասխաններ գտնել այդ հարցերի համար, ապրումակցել հայ-թուրքական, հայ-ադրբեջանական սահմանին ապրող գյուղացուն: Ստորև ներկայացնենք «Հայդուկային շարժումը» դասի պլանավորման օրինակ:

«Հայդուկային շարժումը» թեմայով դասի պլանավորման օրինակ

Դասարանը — 8-րդ

Առարկան —Հայոց պատմություն

Դասի թեման— «Հայդուկային շարժում»

Հիմնական հարցերը.

- Հիմնականում ո՞ր գործոններն էին պայմանավորում հայդուկային շարժումը:
- Ի՞նչ կարող եք եզրակացնել 19-րդ դարի ազատագրական պայքարն ուսումնասիրելով:

Դասի նպատակը, վերջնարդյունքը.

- Կճանաչեն 19-րդ դարի 2-րդ կեսի հայդուկային պայքարի ակնառու գործիչներին:
- Կներկայացնեն հայդուկային պայքարի նշանավոր գործիչների մարտավարությունը:
- Կմեկնաբանեն հայդուկային պայքարի կարևորությունը:
- Կվերհանեն հայդուկային պայքարի դրական և բացասական կողմերը:

Դասի խնդիրները

ա. **Կրթական(ակադեմիական)**

- Պատմական կարևոր տերմիններն իմանալով՝ դրանք օգտագործել ըստ անհրաժեշտության,
- Անհրաժեշտ տեղեկություններ հավաքել տարբեր աղբյուրներից,
- Արտահայտել սեփական կարծիքն ու դիրքորոշումը,
- Աղբյուրներն օգտագործելիս կատարել հղումներ,
- Վերլուծել, վերհանել պատճառները, հետևանքները

բ. **Դաստիարակչական**

- Արժևորել հայդուկային շարժման դերը հայ ազատագրական պայքարում,
- Արժևորել միասնական լինելու կարևորությունը՝ ազատության և անկախության ճանապարհին

գ. **Զարգացման**

- մտածողություն

Վերլուծելու, սեփական կարծիքն արտահայտելու, ցանկացած հարցին քննադատաբար մոտենալու կարողություն

- երևակայություն

Նկարել, առաջ քաշել ծրագրեր, ստեղծագործել

- կամք, կամային որակներ

Նպատակասլացություն

- զգացումներ, հույզեր, ապրումներ

Հպարտություն, վիրավորանք, զայրույթ

Ուսուցման միջոցները (ուսումնադիտողական պարագաներ)

8-րդ դասարանի հայոց պատմության դասագիրքը, տետր, գրիչ, թերթեր, կերպարային քրտեր, սահիկ, հայդուկապետերի նկարները

Ներառարկայական և միջառարկայական կապեր

- Համաշխարհային պատմություն - միջազգային հարաբերություններ, հայկական հարց
- Աշխարհագրություն – աշխատանք քարտեզների հետ
- Հասարակագիտություն - ոտնահարված իրավունքներ
- Հայոց լեզու – բանավոր և գրավոր ճիշտ և փաստարկված խոսք, տեքստերի վերլուծում և ընկալում, հիմնական գաղափարի ըմբռնում
- Գրականություն – Խաչիկ Դաշտենց, «Ռանչպարների կանչը»
- Երաժշտություն- ազգագրական երգ
- ՆԶՊ - զենքեր, ռազմարվեստ, մարտավարություն

Դասատիպեր- խառը

Ուսուցման մեթոդներ, հնարներ

Տեքստային աշխատանք, ալյանս /այլ կերպ/, գործնական աշխատանք կերպարային քարտերի միջոցով,

Դասի փուլերը և ընթացքը

ա.Կազմակերպչական աշխատանքներ

- Սովորողների հաշվառում

- Դասարանի՝ աշխատանքային վիճակի բերում, աշխատատեղերի նախապատրաստում

Դասամիջոցին կատարել նախապատրաստական աշխատանք: Միացնել սահիկը, ապահովել երաժշտություն:

Նախապես սեղաններն այնպես դասավորել, որ գործնական աշխատանքի ժամանակ ունենանք աշակերտների քանակին համապատասխան խմբեր:

բ.Անցում նոր նյութի ուսումնասիրման

Դասն սկսել «Հայ ֆիդայիներ» հայրենասիրական երգը լսելով:

Բուք ու բորան, մութ գիշերին
Պտտում էր ֆիդային,
Փամփուշտները խաչկապ կցած,
Հրացաններն ուսերին:

Ա՜խ ֆիդայիներ, ջա՛ն ֆիդայիներ,
Ձեր մայրերը՝ ձե՛զ մատաղ,
Մշոյ Սուրբ տան Սուրբ Կարապետ
Ձեզի լինի՛ օգնական:

Դուք վախեցրի՛ք, թուրքն անօրէն
Քշի՛ք մեր սար ու ձորէն,
Չար թշնամու ա՛չք վախեցաւ՝
Ջան ֆիդայու գնդակէն……..

Նոր նյութը ներկայացնելուց առաջ կատարել խթանիչ վարժություն:

Ուսուցիչը բաժանում է Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպակից մի հատված և հրահանգում զույգերով ուսումնասիրել ու իրենց կարծիքը հայտնել առաջադրված հարցերի վերաբերյալ:

Հատված՝

Օսմանցին մի օրենք ուներ. եթե մեկը տասը տարի օգտագործում էր մի արոտավայր, այդ արոտավայրը կամ կալվածքը այլևս դառնում էր նրա սեփականությունը: Այսպիսով, վերոհիշյալ գավառակներում, լեռնցի հայերի բոլոր արոտավայրերը, որտեղ քուրդ աղաները իրենց անասուններն էին արածեցրել, մի քանի ամառվա ընթացքում՝ քրդերի ձեռքն անցան: Այդ գավառակները ոչ միայն խլվեցին իրենց տերերից, այլև հայ գյուղացիները խաֆիր (ճորտ) դարձան այդ հողերի վրա: Նրանք պարտավոր էին շաբաթվա մեջ մի քանի օր ձրի աշխատել քուրդ աղայի համար և նրան խաֆիրության տուրք վճարել: Մինչև անգամ քուրդ աղաները իրենց ճորտ հայերին կամ հայերով բնակեցված գյուղերը սկսեցին ծախել կամ նվիրել միմյանց՝ իբրև ինչք կամ ստացվածք:

Հարցեր՝

- Օսմանյան իշխանության նման քաղաքականությունն ի՞նչ վերաբերմունքի կարժանանար ճորտացած հայ բնակչության կողմից:
- Քուրդ աղաների ճորտերը դարձած հայերն ի՞նչ քայլեր կձեռնարկեին կորցրած իրավունքները վերականգնելու համար:

Նոր նյութի ներկայացում

- նոր նյութի բովանդկության ամբողջական պատկերի ստեղծում

Սահիկ, պաստառ

- նոր ուսումնական նյութի ընթերցում

Պատմում, հաղորդում

- աշխատանք դասագրքի տեքստի և այլ ուսումնական նյութերի վրա

Տեքստային աշխատանք,

- նոր նյութի ըմբռնում և գիտակցում (նյութի մեջ օբյեկտիվ կապերի և հարաբերությունների հայտնաբերում)

«Ռանչպարների կանչը» վիպասքի նշված հատվածի վերաբերյալ առաջադրված հարցերի մասին սովորողների պատասխանները լսելուց և վերլուծելուց հետո ուսուցիչը նշում է, որ դասի ընթացքում խոսելու են ժողովրդին համախմբել ու կորցրած իրավունքները վերականգնել փորձած մարդկանց մասին, ում ավելի հաճախ ֆիդայի կամ հայդուկ են անվանում: Միացնում է դասը ներկայացնող տեսասահիկը, գրատախտակին գրում նոր տերմիններն ու բառերը, սկսում ներկայացնել նյութը՝

զուգահեռ բացատրելով գրատախտակին գրված բառերը, անձնանունները, տեղանունները.

ա/ հայդուկ,

բ/ ֆիդայի,

գ/ չելլո,

դ/ Կոռթեր,

ե/Աղբյուր Սերոբ,

զ/Ներմրութի ասլան/ հսկա,

է/Սոխորդ,

ը/Սոսե,

թ/Գելիեգուզան/ Ընկուզաձոր/,

ժ/Անդրանիկ,

ի/Շապին Կարահիսար,

լ/Գևորգ Չավուշ,

խ/Սուլուխ,

ծ/Հրայր Դժոխք

Նոր նյութի ընկալում և ըմբռնում

Ընկալման ստուգում

Այս փուլում ուսուցիչը ստուգում է սովորողների ձեռք բերած ակադեմիական գիտելիքները՝ կիրառելով «Այյանս» (Այլ կերպ) խաղ-մեթոդը:

Ուսուցիչը նախօրոք գունավոր թղթերի վրա գրում է վերը թվարկված նոր անունները, բառերը, լցնում արկղիկի մեջ: Աշակերտներից մեկը գալիս, վերցնում է արկղիկի թղթերից մեկը, կարդում բառն ու փորձում բացատրել դասընկերներին՝ չօգտագործելով նշված բառի արմատը: Այն աշակերտը, ով առաջինն է գուշակում, բացատրում է հաջորդ բառը:

Վարժությունը հրաշալի միջոց է սովորողների ուշադրությունը կենտրոնացված պահելու համար, քանի որ ուսուցչի խոսքը լսած չլինելու պարագայում նրանք չեն կարող ոչ բացատրել, ոչ էլ գուշակել բառերը:

Գործնական աշխատանք

Կերպարային քարտեր՝ Աղբյուր Սերոբ, Հրայր Դժոխք, Անդրանիկ, Գևորգ Չավուշ

Կերպարային քարտը տվյալ իրադարձության կերպարների մտադրությունները, հույզերը, ապրումները, գործողությունները ներկայացնելու հրաշալի միջոց է և խթանում է պատմական մտածողությունը:

- Ուսուցիչը նախօրոք պատրաստում է կերպարային քարտեր: Այսինքն՝ քարտեր, որոնց վրա պատկերված են քննարկվող իրադարձության կամ ժամանակաշրջանի հետ կապված կարևոր կերպարներ: Տվյալ դեպքում հայդուկային պայքարի նշանավոր դեմքերը:
- Ձևավորում է խմբերը, ապա քարտերը վիճակահանությամբ բաժանում է սովորողներին:
- Հրահանգում է, որ սովորողները վերլուծեն տվյալ կերպարը և մեկնաբանեն, թե ինչ զգացողություններ, մտադրություններ, շահեր, պատկերացումներ կարող էր ունենալ նա նկարի հետևում գրված իրավիճակի պարագայում [2;39-40]

Կերպարային քարտերը՝

1. Արաբո- Արաբոյի ջոկատն ընկավ շրջափակման մեջ և նա իր 16 հայդուկների հետ հերոսաբար զոհվեց

(Նկար 1)

2. Աղբյուր Սերոբ- Ժողովուրդը Սերոբին տվել էր Աղբյուր՝ կյանք տվող պատվանունը:

(Նկար 2)

3. Գևորգ Չավուշ- Գևորգ Չավուշն Անդրանիկի հետ վրեժխնդիր է լինում առաջնորդ Աղբյուր Սերոբին սպանած քուրդ ցեղապետ Բշարե Խալիլից:

(Նկար 3)

4. Հրայր Դժոխք- Հրայրն անհեռանկար էր համարում հայդուկային պայքարը: Առաջարկում էր հրաժարվել անհատական վրիժառությունից և հանգիստ նախապատրաստվել համընդհանուր ապստամբության:

(Նկար 4)

5. Անդրանիկ Օզանյան- Ամենայն հայոց զորավար

(Նկար 5)

- Կազմակերպել կերպարների միջոցով տվյալ ժամանակաշրջանի քննարկում:

Ինքնուրույն աշխատանք

- Տետրերում գրել մերօրյա ազատամարտիկների և հայդուկների միջև նմանություններ և տարբերություններ:

Ամփոփում

Պատասխանել տրված հարցին՝

- *Ո՞ր հայդուկին կուզեիր նմանվել: Ինչո՞ւ:*

Եզրակացություն

8-րդ դասարանում «Հայոց պատություն» առարկայի շրջանակներում ուսումնասիրվող «Հայդուկային շարժումը» թեմայի ուսուցման առանձնահատկություններն ուսումնասիրելով եկանք հետևյալ եզրակացություններին.

1. Անհրաժեշտ է ուսումնասիրել թիրախային խումբը, որի հետ պետք է տարվի աշխատանքը:
2. Հնարներ օգտագործել, տարբեր հետաքրքիր ու ինտերակտիվ մեթոդներով (ալյանս(այլ կերպ), կերպարային քարտեր, տեքստային տարբեր աշխատանքներ և այլն) մատչելի դարձնել դժվար տերմիններ, անձնանուններ ու տեղանուններ պարունակող դասերը:
3. Առաջադրանքներն ու հարցադրումները կազմել սովորողների տարիքային առանձնահատկություններին համապատասխան:
4. Կարևորելով աշակերտակենտրոն ուսուցման մոտեցումը՝ հնարավորություն ստեղծել, որ դասի բոլոր մասնակիցներն արտահայտեն իրենց կարծիքը:
5. Սովորողներին դարձնել դասի ակտիվ մասնակից:
6. Սովորողների համար առաջադրանքները և հրահանգները կազմել այնպես, որ հասանելի լինեն բոլորին, այդ թվում ԿԱՊԿՈՒ սովորողներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դաշտենց Խ., «Ռանչպարների կանչը», Երևան, 2022 թ., 536 էջ:
2. Գիրք պատմության ուսուցման. Ինչո՞ւ, ինչպե՞ս, «Պարադիգմա» կրթական հիմնադրամ, Երևան, 2020 թ., 296 էջ:
3. «Գարուն» ամսագիր, 1988 թ., թիվ 8
4. Վիքիպեդիա,Ուսուցման ակտիվ մեթոդներ https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80
5. Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչներ https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf